# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 2 | «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեդալը բաղկացած է 2 տարրից՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշի պատկերով սեղանաձև զոլակից և դրան կապօղակով ամրացված խաչաձև մեդալից: Մեդալի դետալները պատրաստվում են 925 հարգի արծաթից, պատվում են 3 մկմ հաստությամբ 99.9 հարգի ոսկով: Մեդալի քաշը պետք է լինի 29 գրամ: Զոլակն էմալապատված է ՀՀ եռագույնը խորհրդանշող եռագույն սառը էմալներով: Զոլակի չափսերն են՝ ներքևում 10 մմ, վերևում 20 մմ և բարձրությունը 25 մմ: Մեդալը իրենից ներկայացնում է չորս կողմից ոլորված մագաղաթի տեսքով խաչաձև պատկեր, որի արտաքին չափսերն են 40x40 մմ: Մեդալի միջին մասում զետեղված է Նորավանքի եկեղեցու ռելիեֆային պատկերը: Տաճարի վերևում պետք է գրված լինեն «ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ» բառերը: Տաճարի ներքևում պետք է գրված լինեն «Մոմիկ Ճարտարապետ» բառերը: Մեդալը պետք է պատրաստված լինի կողմնորոշիչ նկարին համապատասխան: *Մեդալները պետք է տեղադրված լինեն տուփերի մեջ: Տուփի չափերն են՝ 120x130x45մմ: Մեդալի տուփը պետք է բաղկացած լինի տակամասից և ծածկամասից, որոնք միմյանց միանում են ճկուն ամրակներով: Տուփի մեջ պետք է տեղադրված լինի ներդիր, որը պետք է ունենա մեդալին համապատասխան փորվածք: ** Մեդալները պետք է ունենան իսկության հավաստագիր: *** Նմուշները և տեքստը նախապես պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: **** Ապրանքը պետք է լինի չօգտագործված: ***** Քաշի թույլատրելի շեղումը՝ մինչև 3% |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 2 | |